ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Մասնագիտությունը՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Որակավորումը՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱԿԱԼԱՎՐ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ → ***Առկա*** → ***Հեռակա***

ՈՒՍՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

- ***Առկա՝*** *4 տարի*
- ***Հեռակա՝*** *5 տարի*

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ***Մրցութային՝*** *Մ(գ), Հլգ(գ) կամ Օտլ(գ)*
- ***Ոչ մրցութային՝*** *Օտլ կամ Հլգ*

ՀՊՏՀ Դիմորդ

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ՝

- ***Առկա՝*** *500.000 ՀՀ դրամ*
- ***Հեռակա՝*** *350.000 ՀՀ դրամ*

ԿՐԹԱԹՈՇԱԿ՝

- ***Սովորական՝*** *ամսական 5000 ՀՀ դրամ*
- ***Գերազանցության՝*** *6050 ՀՀ դրամ*
- ***Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի՝ Մ. Քոթանյանի անվան կրթաթոշակ՝ ամսական*** *20 000 ՀՀ դրամ*

ՀՊՏՀ ուսանողներն ըստ տարակարգի՝ 30-70%-ի միջակայքում, օգտվում են նաև ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից, այդ թվում՝ սոցիալապես անապահով, միակողմանի ծնողազուրկ, սահմանամերձ շրջաններից ուսանողները: Զեղչման տարակարգերի մասին առավել մանրամասն տես ***այստեղ****:*

Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն տնտեսական զարգացումը Միավորված ազգերի կազմակերպության առանցքային նպատակներից են: Աշխարհը չի կարող զարգանալ առանց շրջակա միջավայրի մասին հոգ տանող բարձրակարգ մասնագետների:



Շրջակա միջավայրի բակալավրը կարող է լուծել տեղական, ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման խնդիրները, մշակել և իրականացնել կայուն զարգացմանը համահունչ ազգային բնապահպանական քաղաքականություն, հիմնավորել շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ազգային գործողությունների առաջնահերթությունները, գնահատել բնական ռեսուրսները, էկոհամակարգային ծառայությունները և շրջակա միջավայրին հասցված վնասը, կառավարել ազգային անվտանգության համակարգում էկոլոգիական անվտանգության ուղղությունները, շրջակա միջավայրի որակը և բնօգտագործման արդյունավետությունը, նպաստել հասարակության էկոլոգիական գիտակցության բարձրացմանը և էկոլոգիական կրթության սկզբունքների տարածմանը: